

Գասընթացի անվանումը՝	«Առաջին ատյանի դատարանի քաղաքացիական գործերով դատական ակտերին ներկայացվող պահանջները»
Տևողությունը՝	8 ակադեմիական ժամ
Ժամանակահատվածը՝	2012 թ.
Անցկացման վայրը՝	ՀՀ վճռաբեկ դատարանի կոնֆերանսների դահլիճ
Մասնակիցների առավելագույն քանակը՝	25

Գասընթացը նախատեսված է ընդհանուր իրավասության դատարանների դատավորների, ինչպես նաև դատավորների թեկնածությունների և ծառայողական առաջխաղացման ցուցակներում ընդգրկված անձանց համար:

Գասընթացը նվիրված է ընդհանուր իրավասության դատարանների քաղաքացիական գործերով կայացվող դատական ակտերին ներկայացվող պահանջներին:

Գասընթացի ընթացքում քննարկվում են, մասնավորապես, հետևյալ հարցերը.

- Գործն ըստ էության լուծող և գործն ըստ էության չլուծող (միջանկյալ) դատական ակտերի հասկացությունը: Վճարման կարգադրությունը որպես դատական ակտի ինքնուրույն տեսակ:
- Դատական ակտի օրինականությունը:
- Դատական ակտի հիմնավորվածությունը:
- Դատական ակտի պատճառաբանվածությունը:
- Դատական ակտի լրիվությունը:
- Դատական ակտի որոշակիությունը:
- Դատական ակտի անպայմանականությունը:
- Դատական ակտերի ձևը, կառուցվածքը և բովանդակությունը:
- Դատական ակտերի թերությունների վերացումն այն կայացնող դատարանի կողմից:

Դասընթացը վարում է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Սերգեյ Սեդրյանը: